

որ իբր թէ կովից է ծնուել — «զոր ի կովէ եղեալ ասին» : Այդ ծովացուիբը Պարսից գիցարանութեան մէջ եւս յայտնի են : Բռն-գեհնուլ (Հրատար. Iusti զլ. XIV և այլուր) կարդումենք՝ «ծովացուի (ցու-ծուկն) մասին աւանդում են, թէ նա ապրում է բոլոր ծովերում. երբ նա գոռում գոչում է, բոլոր ձկները յղանում են և ծովային բոլոր փնասկար կենդանիները ծնում են իւրեանց սերունդները» : Այս ծովացուը — gāvmāhik պեհլեի լեզուաւ — յիշում է նաեւ Ֆիրդուսի, (էջ 444, 190), ուր աւանդւում է Սու-հրաբի նմուզի մասին, որ իբր թէ նորա սմբակի Հարուածից սոսկաց մինչեւ անգամ gāvmāhi

رخ سمش کاوماهی ستود

Պարսիկների, Քրդերի և Օսերի կարծիքով այդ առասպելական ցլի եղջիւրների վրայ հանգչումէ համայն տիեզերքը : Քրդերը դուրան կոչում են gāmāsi, իսկ Օսերը — «գէխ՝ խիլխէցէց գալ» — երկիրը պահող ցու : Նոյն ցլի մասին յիշում են նաեւ Պարսից հետեւեալ գերերկրները՝ Ֆերիդ-է-զդին Ատտարը և Օմառ Խէյեամ : Այս Ատտարի երկտողը՝

چون زمین در پشت کاو است
کاو بر ماهی و ماهی بر مو است

«Երբ երկիրը հանգչում էր ցլի կոնակի վրայ — ցուլը ձկան, իսկ ձուկն երկրի վրայ»
Միւս բանաստեղծ — Խէյեամը գրում է՝

کاو و ماهی و نامش در زمین
یک کاو ذکر نهفت بر زیر زمین

«մի ցու կայ երկրում — անունն է Պերվին (բազմաստեղծ) : իսկ միւս ցուլը թաքչում է երկրի տակը» : Վիթխարի ծովացուի մասին Ֆիրդուսի աւանդում է Քէյ խոսքու թա-գաւորի նաւագնացութիւնը նկարագրելու մի-ջոյին : Թէ և ծովացուի մասին Եղնիկի Հա-րեւանցի նկատողութեան մէջ չէ ակնարկուած այս առասպելական կենդանիների և Հին Հայոց աշխարհիս ստեղծագործութեան վե-րաբերեալ աւանդութիւնների առնչութեան վրայ, սակայն, մենք, այնու ամենայնիւ, կարծում ենք, թէ այդպիսի մի կապ դոցա

մէջ պէտք է լինի, ի նկատի առնելով, որ ստորերկրեայ ցլի մասին աւանդութիւնը մինչեւ ցայժմ ընդհանրացած է Կովկասեան ազգերի մէջ և ի մասնաւորի Հայոց և Վրաց մէջ (տ. Ereker, der Kaukasus und seine völker էջ 207) : Խօսելով Հին Հայոց երեւակայական ոգիների մասին, Եղնիկը յիշում է նաեւ — շահապետ վայրաց, այսինքն տեղերի վերակացու գեւին, որ երևում էր մերթ օձի, մերթ մարդու կերպարանքով : Ազաթանգեղոսի վկայութեամբ շահապետը գերեզմանների հսկողն էր : Այդ բառը, անտա-րակոյս, համապատասխանում է ավեստա-կան šaithrapaiti, որ նշանակում է՝ «գաւառների իշխան» : Պարսից կարծիքով Հարս-տութիւնը և դանձերը գտնւում են օձերի հսկողութեան ներքոյ : Այսպէս Սադին իւր գուլիստան գրքում ասում է

بزرگ کنج مار

գանձի վրայ հսկում է օձը


کنج در دامن مار و دامن

գանձը տարան նոքա և օձը փնաց :

Ոգիներն «ἄρχοντες» անուամբ պատա-հում են և Յոււնաց մօտ (տ. Chwolsohn, die Isalier II, էջ 186) : Վրաց մօտ ոգին կոչւում է «Բաւօնի» (Դուրբովիս — Պատմ. պատերազմի և Ռուսաց տիրապետութեան Կովկասում II, էջ 173) :

Մ. ՇՈՎՐԵՆՆ

Շարայայելի



Ա Ր Ա Ր Ա Տ

ՔՐՈՆԷ Հայոց ի քրիստոնէութիւն դար-ձին ի վեր՝ Արարատ լեռը նոյն համարուած է այն լեռան հետ՝ որուն վրայ իջաւ նոյիսն տապանը. և կարելի է թէ պատերազմի ա-տան դերի բռնուած Հրէիցմէ մտած է (Հայոց մէջ) այս գաղափարը : Իսկ այդ Արարատ լեռը իբրեւ Արարատ ճանչցուած չէ. որով-հետեւ ըստ Հայոց՝ Մատիս, ըստ Թաթարաց՝



Աղբի տաղ կը կոչուի: Սակայն հայկական մասնաշաղկապներն մէջ՝ փաստաւոր խնդան- ղացիկն կը սկսի Արարատ կոչուիլ, զոր այդ պատմիչն կը գործածէ Ս. Բակուրայ Մժրնայ պատմութեան մէջ (Բնիւ. Գ. 10, — բնիւ- օրինակողք՝ այդ անունը՝ Սարսարտ ուրբա- զրելով շատ գէշ բերք են): Ս. Գրոց Արա- րատն է Ասորեստանի Ռարատն, և յճնուց գրքին (Բ. 4) « լերինք Արարատայ » փնտռե- լու ենք Ռարատուի երկրին մէջ: Պէլքը վեր- ջերս քննեց՝ իրեն ստուգական բնեւորակի- րներն ընշաւոր Հետագոստութեանց մէջ՝ Սա- րատուի սահմանին աշխարհագրական դիր- քին խնդիրը՝ 1. — կ'իբրեւ թէ Ռարատն կը տարածուէր Փիլիստինացի մէկ նահանգէն, Ռարատ լճին հարաւային կողմը, զկայ ի վա- նայ լճին շրջակայ երկիրը: Որով թուի՝ թէ Ռարատուի սահմանին ուղղութիւնը կը ձգուէր զկայ ի հիւսիս. վրան զի պատմական շրջա- նին Ռարատն կամ Պարատն՝ Արարատ լեռնի շուրջը եղող գետնն է, Հայաստանի Արշակունի թագաւորաց թագաւորութեան մեծ նահանգներէն մին, և որ Արարատ ա- նուամբ քաջամանօթ է Աղաթանգեղոսի և հին մասնաշաղկապներու: Արարատ լեռը հազիւ կրնային ճանչնալ դաշտավայրերու ժողո- վաւայներն, որոնց մէջ կար Ս. Գրոց յիշած ջրհեղեղին աւանդութիւնը:

Արարատայ ամբողջութիւնն կը կազմէ թե- րատական ձեւ մը՝ հիւսիս-արեւմուտքէն զկայ ի հարաւ-արեւելք առանցքով մը: Ստորո- տին երկայնութիւնն է գրիթէ 28 մղոն, իսկ լայնութիւնն՝ 23 մղոն: Երկու լեռներէ ձե- ւացած է Ե՛հ. Մեծ Արարատ (16,916 ոտք բարձր ծովու երեսէն) և փոքր Արարատ (12,840 ոտք): Ասանց ստորոտները կից են իրարու մինչեւ 8800 ոտք բարձրութիւն, իսկ գագաթներն՝ 7 մղոն հեռու են իրարմէ: Երկուքն ալ հրաբուխ առաջ եկած են. բայց Արարատայ հրաբուխով ժայթքելը ծանօթ չէ պատմական շրջանի մէջ, և մեծագոյն լեռն գագաթին վրայ կը տեսնուի շատ հին և շա-

տանց մարած հրաբուխի երեւոյթ մը, որ ունի նաեւ մէջտեղը շատ աստիճէ ի վեր լեցուած վտարան կամ բաժակ: Իմ նախորդներու չափերն իրարմէ կը ապրբերին մանրամաս- նութեանց մէջ. բայց կարելի է հաստատել՝ որ այդ մեծ լեռը ձեւացած է երկու բարձրու- թիւններէ, որոնք իրարմէ կը բաժնուին գրե- թէ 100-150 ոտք խոր փոռով մը: Արեւ- ելեան կողմինը աւելի բնորոշակ է, և համեմատեալ (saucière) ձեւով մեծ սարա- հարթի երկարարանք ունի: Արեւմտակողմինը՝ համաչափ կոնի ձեւ ունի, եթէ վերոյիշեալ սարահարթէն նայուի, և հիւսիս-արեւմտեան զառիվերին ծայրը եղող ձիւնապատ և գրիթէ հորիզոնական մարտկոցներու հետ միացած է: Այս յիշած երկու բարձրութիւններն ալ ունին գրիթէ նոյն բարձրութիւնը, սա- կայն, զուցէ արեւմտեան կողմինը աւելի բարձր է: Փարոյշի (Parrot) գաղափարով, նոյնեան տապալը՝ այս երկու բարձրութիւն- ներու մէջտեղը եղած փոսին մէջ իջած է:

Տխոր խորհրդածութիւն մ'է՝ թէ չէր ինչ կայուն — քեւ անդին զօրաբիւրէր կը մաշի, մարդկային մարմնոյ զօրաբիւրէր կը սպառի քեւ հաստատաբարիւրէր և ամեհաւոր յարեւ- կամարիւրէր կը յաճուի: Այս զգոյի աշխար- յիս մէջ ամեհաւորապէս ժամանակ և անոր ձեւաց մէջ աւերմանէ չազատի և ոչ ինչ՝ 3: Այս գտն մեծոր՝ սոսկալի ազդեցութեամբ մը գրուած է Արարատայ շէնքին վրայ: — Հերման Ալդիլի՝ կողմնակի ճեղք մը դիտելը էր վերոյիշեալ երկու բարձրութիւններուն մէջ. և նոյն Ալդիլի կը գրէ՝ թէ այս ճեղքը առաջ եկած կրնայ ըլլայ 1840 տարեայն երկրաշարժով: Ուստի կ'երեւի՝ թէ ժամա- նակն այդէն իսկ վճռական ընթացք մ'առել էր կործանելու կոնին բարձրագոյն մասը: Նոյն իսկ պատահաւորաբար և լեռնի կուշտին տեղի տալով իջնելը՝ պատմական շրջանէ դուրս ժամանակի գործ է: Թուրքիոյ, որ 1701ին այցելեց Արարատը, հսկայաձեւ լեռնան ճեղքուած կողմը այնպէս կենդանի

1. Zeitschrift für Ethnologie, Berlin, 1899, pp. 413 seq.

2. Ստեփան. Իդիստ:

գոյնով կը նկարագրէ՝ որ անկարելի է տա-
րակուսիլ թէ այդ պատառուածքին գլխուտը
կէտերը այն ժամանակ ալ կային¹։ Սուրբ
Յակոբայ փոքր մեծասանը, որ 1840ի
շարժէն առաջ՝ անդունդին խորշերուն մէջ
էր, հաւանորէն հոն՝ ուր որ քրիստոնէու-
թեան առաջին գարեբուն մէջ առաջին ան-
գամ շինուեր է²։

Արարատ՝ բարձրութեան մասին անդի կու
տայ, իրեն գաղաթէն երեւցող, հիւսիսակող-
ման կողմանու ամենաբարձր գագաթներուն
(Էլշուրդ, 18,525 ոտք), նոյնպէս նաեւ
կասպից ծովուն հարաւային երկայնութեան
վրայ բարձրացած լեռներու շղթային մէջի
Տէմովլէնս լեռան (18,000 ոտքէ աւելի)։
Բայց Հայաստանի լեռներուն մէջ ամենէն
բարձրն է, և Էրզրուայի Սպիտակ լեռան
(15,780 ոտք) ամենաբարձր գագաթին 100
ոտք աւելի է։ Բայց զուտի, Էլշուրդ
և Քաղպէ, Սպիտակ լեռ, նոյն իսկ Տէ-
մովլէնս, առնել ամենէն ալ՝ լեռներու կոյսի
մը մէջէն վեր կը բարձրանան, և այդ լեռ-
ներու սակաւիկ մ'աւելի բարձրացոյն գա-
ղաթներ են։ Արարատայ առանձին գիրքը՝
անոր մեծապէս շահագրգիռ պատկերն է։
Անոր բարձրութենէն երեւցող դաշտավայրին՝
երեք տարւթիւններու են. Պարսկաստանի,
Տաճկաստանի և Ռուսաստանի սահմանա-
գրութիւնը Արարատայ կողերուն վրայ գերաբ
կը շօշափեն։

1. Tournefort, Voyage du Levant, Paris, 1717.
Vol. II. p. 357. Հմտ. նաեւ Ritter, Erdkunde,
vol. I. p. 507.

2. Ինչ, այս տեղ մանրամասն կը պատմէ Ակուսի
երկրագործի կրթանումը — իսկ Ակուսի անուան մա-
սին կը գնէ հետեւեալ ծանօթութիւնը. — « Առաւան
խորդին համար տես Parrot, Reine zum Ararat,
էջ 110. — Bitter (Erdkunde, X, 508) Պրոսպեր ալ
կը յիշատակէ (Bulletin de l'Acad. de sc. de st.
Petersburg, 1841, vol. VIII. p. 43), բայց կը սխալի
ըսելով թէ Պրոսպեր Ակուսի ուղղագրերն է այդ անունը։
Նա իբրեք կ'ուղղագրէ զայն Ագորի, և Ակուսի անուն
ժողովրդական ծագման մասին տարակոյս կը ցուցնէ։
Կենտրոն թէ տեղւոյս հին հայկական անունն էր Ակու-
սի կամ Ակկուսի, և վերջին հայ մատենագիրը Արի-
ստի խնամքը հանելու համար փոխեր են հին անունը։

Վիթիարի լեռն՝ գագաթին մինչեւ 9000
ոտք վար ձիւնապատ է մինչեւ Մայիս ա-
մին, և Երասխայ ծաղկաւտ հովտէն դե-
տուած այս բնորոշակ սպիտակ շղարին
տեսարանն՝ աշխարհիս ամենէն գեղեցիկնե-
րէն մին է։ Իսկ Սեպտեմբրի մէջ՝ ձիւնա-
պատ ամպշովանին՝ Մեծ Արարատայ գա-
ղաթին վրայ կ'ամփոփուի. — մշանջնաւոր
ձեան սահմանը՝ հիւսիսակողմի դաշտահով-
տի վրայ նայող կողմէն՝ 13,500—14,000
ոտքէն աւելի բարձր չէ ծովու երեսէն։ Ընդ-
արձակ ձորը՝ որուն մէջէն Երասխ կը վազէ,
ամառուան ջրամուծիւնները կը ժողվէ. և այս
բնորոշարանէն ջրով օդը կը բարձրանայ
լեռան զէպ հիւսիսային կողերը, կը հաշե-
ցինէ ձիւնը՝ այս լայնութեան մէջ կարծուա-
ծէն աւելի մեծ բարձրութեամբ։

Սեպտեմբրի վերջին կէսն է՝ լաւագոյն
եղանակ վերելքի։ — Եւ յանձնարարեմ
հետեւեալ ծրագիրը՝ ճամբորդի մը որ կ'ուզէ
լեռանս վրայ մեր տուած տեղեկութիւնը բնո-
րոշակել, — 1. Սարաւար Պուլսէն ելիւ
Փոքր Արարատայ վրայ. — 2. Մեծ Արա-
րատայ զէպ հարաւային կողերը յիմէ՝ և
լեռան այս կողմը լիովին քննէ՝. — 3. Մեծ
Արարատայ ելիւ, լեռնու իմ տեղագրիս մէջ
նշանակուած կէտէն սակաւիկ մի հարաւա-
կողմ կէտէն, — և 4. Ակուսի ձեղքուածին
մէջի սահմանադրին վիճակը հետազօտէ՝. —
Կարեւոր և հետաքննական արշաւանք մ'ալ

Ռուս պաշտօնական քարտէսն ուղղագրութեան հե-
տեւեցայ, որ առ հասարակ հին անունը կը գործածէ։ —
Պէլլ Լաբուար մասնութեամբ մը կ'ըսէ թէ Սագմա-
նասար Ռի (859—824 նախ քան Գրիգորոս) առաջա-
կան արձանագրութեան Ասուրիս — այն լեռներուն
անունը, ուր որ Ռարաուսի կամ Արարատայ թագա-
ւորն Արամ, Ասորեստանեայց միապետին բանակներէն
հալածանագրութեան (Ասուրիս — այն լեռներուն
Ակուսի կամ Ագգուսի (Verhandlungen der Berliner
Gesellschaft für Anthropologie, 1893 p. 71)։ Եթէ
գիտենք որ վան քաղաքին անունը, թագաւորութեան
մը անուն է՝ որուն այն ժամանակու մայրաքաղաք եղած
էր և և տոսպեան արձանագրութիւններուն Պիեման,
պիտի համոզուինք որ նաւանդի մը է հին անունը այդ
կողմի աշխարհներուն մէջ յաճախ քաղաքի մը կը տրուի,
որով ալդ անունը մերը կը մնայ։

կրնայ ըլլայ գէպ ի փոքր հրաբխային լիճեր, հիւսիս — արեւմտեան կողերուն վրայ, որ կիսի-կէօջ կը կոչուի¹ :

Ապահոսեայ լիճով պարսպին ետեւ, ձիւ-նեղու գիւմաց առաւմտեան զծով՝ սառնակոյտ մը կ'իջնէլ զաղաթէն վար, որ հաւանորէն միակ ճիշտ սառնակոյտ է Արարատայ վրայ, և որուն կարծեմ ընդարձակութիւնը տասն-ճանաքար նուագելու վրայ է: Այդիկ կը հա-մարի՝ թէ խիճեղէն զանգուածներու երեւոյթ ունեցող զաղաթեներն, որոնք իրեն ներկայա-ցուցած պատկերին համեմատ Ս. Յակոբայ աղբիւրէն սակաւիկ մի հնուտ ճեղքին մէջ կ'իջնեն, կազմուած են 1874ին աղմուտ և պինդ սառնակոյտի ստույցով, որ ապա քա-րերով և աւերակներով ծածկուեր է: Նա-խնք Այդիկ կը գրէ՝ որ 1844ին, ուղղակի, բայց խորր թաղուած, հաղորդակցութիւն կար վերոյիշեալ ստույցին և սառնարանին ստորին ծայրը եղող սառույցին մէջ, և թէ 1874ին այս հաղորդակցութիւնը կարեր է, և նոյն իսկ սառնեղէն բլուրներուն բարձրու-թեան երեքին մէկը նուագեր է: Այս գա-լաթներուն զլիւսուն վրայ գտաւ Այդիկ շատ մը ճահճիճներ և փոքր լիճեր, որոնց փոքրա-գունին շրջապատը հարիւրաւոր քաղաքի էր: Ես չեմ կրնար այս սառնակոյտերու արդի լիճակին վրայ ստույգ բան մ'ըսել, և ոչ ալ կրնամ հաստատուել թէ կան: Ընդքին մէջ սառույց չափայ, թէպէտեւ այս յայտնի է թէ ճեղքին այժմեան լիճակը զլիւսուրա-պէս սառույցի արգասիք մ'է, և թէպէտ սառ-նակոյտի ջրոյն լճակի մը վրայ զարմացայ,

որ քարերու և աղմի ընդարձակութեան մէջ տեղը փերուզակնի (turquoise) նման առ-լածուեր էր: Հաշուեցինք՝ որ այժմեան ուա-նակոյտը գրեթէ 8000 ոտք վար կ'իջնէ — զիսկի կէտ մ'է այդ, եթէ խորհրդածնը որ Արարատայ այս կողման մշտնջենաւոր ձեան սահմանադիր 14,000 ոտք բարձր է:



Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

ՀԱՅԵՐԵՆԵՐ 4ին միջօրէն ետքը ժամը հինգին սկսանք երթալ գէպ Լճիմածին, գաշ-ակն մէջէն գրեթէ տասուրեք մղոն է ճամ-բան, զոր մեր չորս ձիերը մէկ ժամ և քա-ռասուն վայրկեանի մէջ կարեցին: ... Յանցառ բուսականութեան մէջէն անցնելով, զոր կը պահպանեն Ալակէօզ լեռնէն բլրած առու-ներն, հասանք կայան մը շաղախով շինուած բարձր պարսպի մը մուտքին առջև, այդ պարսպին վրայ տեղ տեղ բոլորած և աշ-տարակներ կան, — ցուցէ պարսկական միջ-նաբերդ մ'էր: Իսկ արտաքին պարսպին մէջ կայ Ս. Գրիգորի մայր եկեղեցիով վանքը: Մեծ գուռ փակուած է. ի գուռ զարկինք ու զարկինք: Պատին փշրուած կոտրած երեւոյ-թէն կրնար կարծուիլ՝ որ հոն կենդանութեան նշան չկայ... Բայց վերջապէս ձգին ինքնոր շարժեցան և գննապանք երեւցաւ, որ զմեզ Քէմպրիճի զպրոցին բակին նման բակի մը մէջ տարաւ, որ հարաւային պատին վրայ եղած մեծ գրան կից է. — Պանդուխտներու

1. Կը գնենք հա՛ Մեծ Արարատայ վրայ յաղաղու-թեամբ ելլողներուն ցանկը, որչափ որ կը քննէք սառ-ւել զանոնք:

1. F. Parrot, 1820. Ս. Յակոբայ վանքէն (Ալուսիկ ճեղքուածք) մեկնեցաւ, և հիւսիս-արեւմտեան կողմէն վեր ելաւ:

2. K. Spasky-Antonoff, 1834. Ալուսիկէն:

3. Hermann Abich, 1845. Սարտար Պուլախէն:

4. H. D. Seymour, 1845. (Նոր Ալուսիկէն?):

5. I. Khodzko, N. V. Khanikoff, և այլք, 1850.

Սարտար Պուլախէն:

6. R. Stuart, և այլք, 1856. Պուլախէն:

7. J. Bryoe, 1876. Սարտար Պուլախէն:

8. G. P. Baker, 1878. Սարտար Պուլախէն:

9. Sivoloboff, 1882:

10. E. Markoff, 1888. Սարտար Պուլախէն:

11. Semenov, 1888 (?):

12. Raphaelovich, և այլք. 1889. Սարտար Պուլախէն:

13. F. G. Allen, W. L. Sachtleben (1892?). Պա-

յաղախէն:

14. Gostukhoff, 1893. Սարտար Պուլախէն:

15. H. B. Lynch, H. F. B. Lynch, և Rodolph Taugwalder, 1893. Սարտար Պուլախէն:

16. Herr. A. Oswald. Eine Besteigung des Ara- rat in Jahr. schweiz. Alpenclub, Berne, 1899-1900, vol. XXXV. pp. 157-183:

կամ ուխտաորներու բակ կը կոչուի այդ՝
հեղ և անարուեստ շէնքեր, փայտեայ եր-
կայն ճեմելիքով մը, ճառարներն կը կալ-
մեն։ Պատուհաններուն առջև, մասպաղ
ծառերու շարքին հստի լոյսեր զրուած են։
Քակին մէջտեղ ջրոյ աւազանին աստիճան-
ներու վրայ կան բազմաթիւ անձինք։ Հոս
աղմուկ է և շփոթութիւն։ Մեզի բռնածին
համեմատ, ամբողջ վանքի իւրաքանչիւր սե-
նակիր բռնած են այնչափ անձինք՝ որչափ
որ բոխն թէ կան։ Գլխաւոր բակին մէջ մեզի
համար պահուած են եղբւր բնակարաններ.
բայց մենք չըսպասեցինք մինչև երկրորդ
օրը։ Երեկոյեան խաղաղութիւնը դեռ չլրջո-
ւած, առանձնացանք գիւղին մէջ սենեակ
մը, ուր զրինք մեր գինուտրական անկողին-
ները. եղաւ կատարեալ ննջարան մը։

... Արդէն արեւակը բարձրացեր էր
երբոր մենք, մեծ գծուարութեամբ՝ խնդած
սենեկին մէջ նախաժամշիւս պատրաստելէն
հաջք, մեր բնակարանէն զուրս ելանք ։
Գիւղին, որ վաղարշապատ պատմական ա-
նուամբ կը պատռուի, փռշելից և երկայն
ճամբէն վզկ ի վար գացինք։ Տրպատ թա-
ղաւորին մայրաքաղաքէն բան մը մնացած
չէ. այդ շինուած էր կամ ճիշդ այս տեղ և
կամ անմիջապէս մերձաւոր գիւղի վրայ ։
Հին կամուրջի մը մնացորդները կը տես-
նուին. այս կամուրջը ձգուած էր Քասաղի
կամ վաղարշապատի գետին վրայ, հիմա-
կուան բնակութենէն թիշ մը վզկ հարաւ-
արեւմուտք հեռու։ Ասոր շինութենէն ի վեր
գետը փոխած է իւր բնթացքը ։ Կամուրջիս
որմաշինութիւնը աւելի Միլիին դարու բնա-
ղորշըդ ունի — զիւրեւած կամամբակներ,
որոնք կազմուած են խնամքով աաշուած և
իրարու ապուցած խոշոր քարերով։ Փոփոցին
վրայ բազմաթիւ կրպակներն՝ պատուհանա-
փեղկերով աղլի կերպարանք մ'ունին, և
Եւրոպայի նման կարգապարտեմամբ են։ Բաղ-
մաթիւ պատուհաններով հասարակ շէնք մ'է
կղերանոցի ճեմարանն։ — Հիւսիսային դռնէն
մտանք վանքը, մեծ բակին արեւմտակողմը
բացօթեայ տեղ մը ելանք։ Վրան զոյց ճամբով
մը անցանք քառանկեան մէջ, սրուն մէջտեղը
կանգնուած է կաթողիկէն։...

Էջմիածնայ մեծ դաւթին՝ արեւմուտքէն
գլխ արեւելք՝ երկայնութիւնն է 349 ոտք
6 մասնաչափ, իսկ լայնութիւնն՝ 335 ոտք
2 մասնաչափ։ Եւս անձամբ չափեցի, որուն
վրայ հիացած էր հոն ժողովուած բազմու-
թիւնը, և շփոթած էր՝ այս տարօրինակ գոր-
ծոյն բացատրութիւն տալու համար։ Սակաւ
ժամանակի մէջ շատ մեծցեր է երկայնու-
թիւնը, վասն զի արեւելեան բանի չեկող
կողմը վերցուեր է։ Շինութեան մէջ են կարգ
մը ցեղեցիկ քարաշէնքեր, որով շատ ձողա-
չափ պիտի բնաւարձակի տեղը։

Քակին արեւմտակողմը՝ գոց ճամբուն հա-
րաւակողմն է կաթողիկոսին բնակութիւնը,
իսկ նոյն ճամբուն հիւսիսային կողմի շէնքը
եպիսկոպոսներուն սեփականուած է։ Հայրա-
պետական բնակարանին վրայ շքեղութիւն
կամ ճարտարապետական ձեւ մը չկայ. —
ասոր հստիկ պզոյթի պարտէջ մ'է։ Հիւսիս-
ային կողմը միանձանց բնակութեան սե-
նեակներն են, և բարձրաւանդակ մէկ ծայ-
րէն միւս ծայրը որածալը կամուրներու վրայ
շինուած ճեմելիք մը կայ (terrace)։ Արեւ-
ելեան կողմին շէնքը կործանելու վրայ է, որ
համեմատաբար՝ խեղճ ու ակար նիւթով շի-
նուած է։ Խոնացա՝ որ ասեմօք կղերանոց
և սուրբանէ է եղեր այս տեղը. — հարաւա-
կողմին շէնքերու հետ միութեան կէպին վրայ
գետ կայ փոքրիկ փուռ մը։ Այս շէնքերը
քարաշէն են, և թէպէտ ուրաղ, բայց ամ-
բողջ քառանկեան հաստատութիւն մը կու
տան. ասոնց արեւմտեան կողմէն սկսելով
կայ նախ գետնայարի 155 ոտք երկայն և
16 ոտք 6 մասնաչափ լայն սեղանաւանդ
մը, որուն բարձրութիւնը 14 ոտքէն աւելի
չէ։ Չեկունը կամարածեւ է, և պատերուն
նման բռածեփ եղած։ Լուսուոր է և ամառ
ատեն դով։ Երկու կարգ հեղ սեղաններ
զրուած են վերէն վար, և արեւմտակողմը՝
կաթողիկոսին փայտաքանդակ զահն ու ամպ-
հովանին։ Երբոր միանձունք կերտելուի հա-
մար կը ժողուին, կաթողիկոսին սեղանը կը
տրուի ամպհովանիին տակ։ — Այս սեղա-
նաւան զուգահեռական և անոր յարակից
մասերուն զէմ առ զէմ հարաւակողմը յար-
կնման սենեակ մը կայ ծառայից, — տեղ-

ւոյս մէկ մասը զէջ արեւելք բռնած է խո-
հանոցն: Սեղանասան վրայի յարկին մէջ է
մատենադարանն. իսկ շէնքերուն արեւելեան
մասը բռնած են թէ՛ գեամայարկի և թէ՛ վե-
նայարկի վրայ ցորեննոցներն ու շաւմա-
րաններն:

Ռիտուաւորաց բակէն և ասոր կից շէնքե-
րէն, կաթողիկոսին պարտէզէն դատ, որոնց
մին՝ հարաւային, միւր՝ հարաւ-արեւմտեան
կողմն է — արտաքին պատին և մեծ բակին
մէջ տեղը մեծաւ մասամբ դատարկ մնացած
գետին կայ: Մեր վերադայն յիշած նոր շէն-
քին (որ անշուշտ հիմա աւարած է), որուն
որմայինութեան զանազանութիւն կու տան
կարմիր և գորշապոյն քարերն, հարաւա-
կողմն է ամուր քարաշէն սպարանն:

Քառադ գետը՝ արեւեստական լիճ մը շի-
նիլու ծառայած է. լճին չորս կողմը պատած
են հովանաւոր ծառուղիներ: Յետին աստի-
ճանի ախորժելի է այս ընդարձակ լճին չորս
կողմը շրջան բնէն. — Ներսէս Ե՛ Նրբամուռ-
թեան արդիւնքն է այս լիճն (1761—1857),
որ վանքին հարաւային արտաքին կողմն է.
— անոր մէկ կողման սեխարանն են՝ կա-
թողիկէի գլուխն ու գմբէթն, միւս կողման՝
Արարատայ կամարն և փոքրագոյն Արարա-
տայ բուրձն՝ որոնք ջրոյն և ծառերուն կակուղ
մակերեւոյթէն վեր շրջագիծ մը կը կազմեն:
Վանքն, նոյնպէս նաեւ շուկան՝ բերդի ար-
ժանատոր պատերով շրջափակուած են, որոնք
պարսկական ժամանակի մնացորդներ են:...

Մատենադարանն այցելեցի, ուր բազմա-
թիւնը լեցուեր էր: Կաթողիկոսին պարտի-
զին կողմէն է մուտքը: Յնչուեցայ՝ տեսնե-
լով որ մեծապէս յարգի ձեռագիրներ սեղանի
մը վրայ բացուած տարածուած էին և ամէն
մարդ կը թերթէր զանոնք: Այսչափ թոյլ-
տուութիւն. . . . Այս ձեռագիրներուն մէջ
Նոր կտակարան մը տեսայ, ի գարու, ճոխ
քանդակուած փղսկրեայ կողբով: Քրիստո-

սի պատկերն ու կեցուածքն նկարին մէջտեղ՝
հոռմայեցի կայսեր մը պատկերը ու կե-
ցուածքը կը յիշեցընէր: Այս գանձերու մէջ,
զորս աղտոտել թոյլ տրուած է ամէն ձեռ-
քերու, կային ժի- գարու գեղեցիկ ձեռագիր-
ներ և մանր մանր գեղապարուած պատա-
րագամատոյց մը ժի- գարու:

H. F. B. LYNCH

Թրգմ. Հ. Ս. ՍԱՐԵՆՍ



Ա. ՊՈՏԹՈՏ

Ն Ե Ր Ո Ն

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԼՆԵԳ ԱՐԱՐՈՒԱՄՆԵՐՈՎ



(Շար. տես էջ 83)

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱՄ

ՄԵԾԱԳՈՏՆ ԿՐԿԵՍԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԱՄԲՈՏԸ

Կը տեսնուի մերքին մասը Ամրոցին (Oppi-
dum)՝ իր երկու կեդրոնական մեծ կամարնե-
րուն միջեւ, որոցմէ աշակողմինը կը խուժէ դէպ ի
կտուանոցը և ծախարկողինը՝ որ է ծաղթական
կրամ (Porta pompae) կամարը, կը բացուի
դէպ ի Նշանց շուկան (Forum Boarium).

Ամրոցը, ինչպէս նաեւ քոյր մնացած մասը
յալմանոյամ շէնքին, շինուած է՝ մասամբ փլու-
րաքորով (tufo, taf), և մասամբ փայտով:
Այս ամաղին գաւթին մէջ է դուռը մերքնուղիի
մը որ կ'երկարածգի խորը հետեւիւղով կրկնսիմ
նակատին մնա՞ծ կոր գիծին. փակուած է՝ մա-
յոյին աշակողմը՝ բանտերում պատովը, և ծա-
խարկովի պատը՝ խնդրուած է խամոթներով և
պամպուկներով: Միևնոյն պատին մէջ՝ թեթեւա-
կի զոգաւոր՝ կը նշարուին առաջին աստիճան-
ները սանդուխի մը՝ որ կը բարձրանայ անկի
բարձր աստիճաններում (precinzione).

Դէպ ի կրկն խուժող կամարին քով կը տես-
նուի նակատնէ՞մ՝ վեր Գոտին (Podium) տամոդ
սանդուխի մը առաջին աստիճանին որմածին մէջ
մտնելը:

1. Լինը՝ այս տուրքէն ետքը կը նկարագրէ հանդի-
սաւոր թափօր մը, Նշանին բառին իմաստը. յետոյ
մանրամասն կը պատմէ Հռիփսիմեանց պատմութիւնը,
և Ս. Գր. Լուսաւորջայ տեխիւր, մինչև կը հասցնէ
կաթողիկէին շէնքութիւնը, զոր կը ստորագրէ: